

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Վ Ե Ր Զ¹)

*
* *

Այն ինչ Բուրժուազիան, այդ Երրորդը Դասակարգը² բարձրանում էր ասպիճանաբար, միշտ աւելի շեշտելով իր ոյժն ու ազդեցութիւնը:

16-րդ դարում զարգանում է մանուֆակտուրան, որ շնում է սկիզբ մի նոր անսովորական սիտուէի, այն է՝ կապիտալիստական արդիւնազորութեան: Մանուֆակտուրայի մէջ բազմաթիւ փաթեթներ արհեստաւորներ կենտրոնանում են մէկ կապիտալիստի (Դրամատիրոջ) հրամանադատութեան տակ, մի ընդարձակ հիփոարկութեան մէջ, որի անունն է գործարան: Արդիւնազորութեան խարիսը փակուի արհեստին է, ձեռագործը: Աշխատանքը բաժանուում է շարքի մէջ. ամեն մի առարկայ (Դիցուք մի կօշիկ, մի ժամացոյց) հանդիսանում է իբրև արդիւնք բազմաթիւ արհեստների համերաշխ գործակցութեան: Աճում է ճարպիկութիւնը, զարգանում է աշխատանքի բաժանումը, Դառնալով Դրդի: Նշանաւոր գիւտերի Պարապմունքների այդ մասնաւորումն էր, որ ծնունդ տւեց լեհագայում մեքենաներին:

¹ Տես Մուրճ 1899 թ. № 11—12, 1900 թ. № 2:

² Tiers état—երրորդը՝ ազնւականութիւնից ու կղերից լեռու:

Ֆրանսիացում մանուֆակտուրան ծաղիկց Լուչովիկոս XIV-ի օրով, շնորհի նրա առաջին մինիստր՝ Կոլբերի ջանքերին: Նա մեծ զարկ արեց առևտրին ու արդիւնագործութեան, պետական հովանաւորութեան փակ առնելով նրանց, նիւթապէս աջակցելով ֆրանսիական գործարաններին, սահմանելով հովանաւորող մարքսեր ֆրանսիական ապրանքների համար և այլն:

Կապիտալիստական շրջանը առաջ բերեց նոր սոցիալական չարաբերութիւններ: Երևան եկան ազատ, վարձկան բանւորներ կամ պրոլետարներ: Ազատ բանւորներ՝ երկու տեսակէտից. ոչ նրանք են անմիջապէս պատկանում արդիւնագործութեան միջոցներին (հողին, աշխատանքի գործիքներին), ինչպէս հնագործական գերին էր և միջնադարեան ճորվար, ոչ էլ արդիւնագործութեան միջոցներն են նրանց պատկանում, ինչպէս այդ տեսնում ենք զիւլացու ինքնուրոյն անտեսութեան մէջ: Ազատ՝ թռչնի պէս, իրենց ուժերը ազատորէն անորինող, զուրկ սեփականութիւնից, միմիայն իրենց ձեռքերի ու ոտների փէրը՝ պրոլետարները կամ պիտի ծախէին իրենց մկանների ոյժը կամ թէ սովամահ լիսէին:

Դա է իսկական պրոլետարիատը: Նրա թիւը այնուհետև ամեն անգամ անսահման էւոլյուցիայի հետ զուգընթացաբար: 16-րդ, 17-րդ և 18-րդ դարերում նրա սոցիալական դերը աննշան էր: 19-րդ դարում էր, որ նա պիտի ծաւալէր իր դասակարգային ոյժը և սոցիալական մեծ, համարարած շարժումը: Նրա շարքերը յանկարծակի արարացան 16-րդ դարում, երբ բրդի մանուֆակտուրան զարգանալով՝ զանազան տեղերում (գլխաւորապէս Անգլիայում) խոշոր հողատէրերը որոշեցին քշել զիւլացիներին իրենց կալւածներից և փոխարինել նրանց ոչխարների հոտերով: Բրդի գինը բարձրացել էր, իսկ փոշը ամենակարող ոյժն էր ինչօրայնների աչքում. ուստի աւելի շահաւէտ էր նրանց համար՝ ունենալ ընդարձակ սրբօրտապշեր, քան երկրագործներով բնակեցրած կալւածներ: Եւ զիւլացիները բռնի դուրս քշեցին: Զրկած ամեն ինչից՝ նրանք մասսաներով տեղափոխեցին քաղաքները՝ գործ որոնելու: Հողերի բռնի գրաւումը փելի ունեցաւ նաև Բերմանիայում սէֆորմացիայի

շարժման միջոցին, երբ կաթոլիկ եկեղեցիների ու վանքերի անա-
գին կալածները յափշտակեցին՝ իշխաններից և անդրեղ ապաս-
տանաճ թշուառները շարձան խմբովին թափառական, մուրացիկ

16-րդ դարը, ինչպէս տեսնում ենք, հեփաքքրական մոմէնս
է ներկայացնում անտեսական էտլիցիալի մէջ: Հոլերի այդ մեծա-
ծաւալ էկսպրոպրիացիան (գրաւումը) մի կողմից, և գիւղացիների
մասսային պրոլետարիագիան միւս կողմից՝ սիլիզն են շնում
այն նշանաւոր անտադոնիզմի, որ այսօր իր նորագոյն, յարուկ ձևով
խաղացում է բուրժուա և բանւոր շասակարգերի միջև:

*

**

Բուրժուազիան իր հարստութիւնների շնորհիւ շառնում էր
հասարակական զօրաւոր գործունէ կապիտալը հպարակեցնում էր
իրեն ամենքին և ամեն ինչ: Կապիտալին ջերմ երկրպագու էր
շառնում ինքը թափաւորը: Նա պէտք ունէր շրամի՝ պատերազմ-
ներ մշկու և արքունիքի անսահման ծախքերը հոգալու համար:
17-րդ, 18-րդ դարերում պերճանքը առաստիակական էր արքայա-
կան պալատներում: Նաւլութիւնը խելագարութեան էր հասնում:
Այդ ամենը պահանջում էր շրամի անսպառ աղբիւրներ, ուստի
հարկերը միշտ աւելի և աւելի աճում էին, ծանրանալով ժողովրդ-
շային ընդհանրութեան վրայ: Միաստիպական բռնակալութեան
լուծը յաջորդելով ֆէօդալականին, կամաց-կամաց շարձաւ սրանից
աւելի անդուժ ու բարբարոս: Միաստիպութիւնը փրանսիացում իր
յաղթանակը ցանկելով ֆէօդալիզմի ու կղերի վրայ՝ իրեն գործիք
շարձրեց այդ երկու հակաժողովրդական տարրերը՝ բուն ժողովրդին
հարստահարելու համար: Սրորին շասակարգերը շուտ զլացին իրենց
կաշի վրայ արքայական շեսպոտիզմի լուծը և շուտ սովորեցին ափել
նրան: Բայց աւելի նշանակալից էր բուրժուազիայի շիրքը: Այդ
շասակարգը, որ միայնակ մշում էր առևտուրն ու արդիւնազոր-
ծութիւնը, և որ հետեւապէս ներկայացնում էր ֆաքտորէն սոցիա-
լական կարեւորագոյն շասակարգը, իրաւաբանօրէն մնում էր ոչնչ-
ու թիւն, զուրկ քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներից:
Այդ շասակարգից էին առաջանում նշանաւոր գրողներ, փիլիսո-
փաներ, պետական պաշտօնեաներ և այլն: Փակտորէն — ամեն բան,

իրաւաքանորէն — ոչինչ... Ընդհարումը — վաղ թէ ուշ — անխուսափելի էր: Յիսուսն էր գարհուրելի անտագոնիզմ բուրժուազիայի ու իշխող շասակարգերի միջև, որ արտայայտեց այնքան կատաղորէն 18-րդ դարի այնչափօխական գրակոնոթեան մէջ: Այդ անտագոնիզմը լարելով, բորբոքելով³⁶ կամաց-կամաց պատրաստեց պատմական այն մեծ կատաստրօֆը, որ յայտնի է աշխարհին: —

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՍԻԹԻՒՆ ԱՆՈՒՆՈՎ

Ո՛րքան թոյն ու ատելութիւն էր կուտակուած բազմապատնջ մարդկութեան ծոցում... Ահաբէր վրէժխնդիր լինել: Ահաբէր էր տապալել վերջապէս երկրաւոր ու երկնային բոլոր կուռքերը, որոնց անունով դարերի ընթացքում խաբեցին, թալանեցին ժողովուրդներին: Ահաբէր էր վերջապէս շափի կանչել բոլոր աշխարհական ու կլերական հեղինակութիւններին, որոնք իրենց անձնական կամ շասակարգային արտօնութիւնները անխախտելի օրէնք դարձնելով՝ երբէք չըկարողացան կամ չուզեցին ըմբռնել, թէ ինչ ասել է մարդկային արժանաւորութիւն, մարդկային իրաւունք: Պարիզը ժայթքեց, ցնցելով իր հետ բովանդակ աշխարհը: Որքան վեհ էր տիեզերական մայրաքաղաքը իր ողբերգական մեծութեան մէջ... Ո՛րտիսի վեժն ու ահարկու տեսարան՝ երբ ազգապարական տենչերով վառուած ամբոխը, որպէս մարմնացած տարերք, խելագարի պէս առաջ էր սլանում սրտալով՝ à la Bastille!...

Եւ մինչ ստրուկ ժողովուրդները տիեզերքի բոլոր ծայրերից խուլ ձայնակցում էին այդ որոտումին, ողջունելով ազատութեան արշալոյսը, մինչ տիրանները բոլոր բռնապետական երկիրներում սարսափահար իրենց գլուխն էին ողբում, — հանրապետական ազգային ժողովը բաց էր արել արդէն ահաւոր դատաստանը և Նէմզօքսը, վրէժխնդրութեան այդ ասպաճը անխնայ լափում էր ժողովրդի շահիճներին...:

Ֆրանսիական Յեղափոխութիւնը մի եղակի երևոյթ է մարդկային պատմութեան մէջ: Նա պատրաստուել էր երկար ժամանակից ի վեր փոստական ու մտաւոր առաջադիմութեամբ: Կան շեռ աչսօր էլ կարճամիտ ուղեղներ, որոնք այդ վիթխարի պատմական դրամային զուտ իդէօլոգիական (տեսլադիպական) հիմունք են տալիս:

վերագրելով այն՝ Վոլրէրի, Ռուսսոյի և այլոց քարոզներին: Հարկ կան արդեօք ծանրանալու, որ Վոլրէրները միայն արձագանքն էին փրօղ շրութեան ու սրամաշրութեան, որ նրանց քարոզած գաղափարները միայն անդրադարձումն էին գոյութիւն ունեցող սոցիալական դասակարգային շարաբերութիւններին:

Մի քանի Ֆաքրեբ միայն բերինք նախայեղափոխական սոցիալական շարաբերութիւնները բնորոշելու համար:

Յեղափոխութիւնից առաջ Ֆրանսիայի բոլոր հողերի 1/5-ը թագաւորի սեփականութիւնն էր. իսկ 1/7-ը բաժանուած էր թագաւորական ընտանիքի իշխանների միջև: Այդ ահուելի հարստութեան հեղ միասին թագաւորը, ինչպէս արդէն յիշել ենք նախընթաց էջերում, վայելում էր միապետական անսահման իրաւունքներ: Լուչովիկոս XVI, որի զուտը զիջութիւնի սակ շրուց 1793 յունւարի 21-ին, սիրում էր խօսել Լուչովիկա XIV-ի ձեերով. «պետութիւնը եօ եմ», և բարձրաձայն յայտարարում էր, որ իր պապերից ժառանգած իշխանութիւնը երբէք չի կարող որ և է փոփոխութիւն կրել ¹:

Ազնուականութիւնը, որ ըստ Տէնի՝ հաշոււմ էր ամբողջ երկրում ընդամենը 25—30,000 ընտանիք, ստանում էր պետական զանձարանից ահագին դումարներ: Միմիայն մօտ 1560 հողի, որ ծառայում էին արքունիքում, վայելում էին պետական եկամուտի 1/10-ը, մօտ 100 միլիօն Ֆրանկ!

1774 թւականից մինչև 1789 պետական զանձարանից յարկացել է պէնսիանների ու զանազան պարզեւների համար մօտ 570 միլիօն Ֆրանկ, որից 200 միլիօնը՝ միմիայն թագաւորական ընտանիքին: Պոլիտիկապետական ընտանիքը, որ թագուհու անանձին բարեհաճութիւնն էր վայելում, ստացաւ այդ միջոցում 1,750,000 Ֆր. չայքոնի է թագուհի Մարիա Անտուանեթի առասպելական շռայլափրութիւնը: Այդ ախտով վարակւած էր սակայն ամբողջ ազնուականութիւնը, ուստի և չընայելով շաղ-չաղ պենսիաններին՝ նա միշտ ծանրաբեռնուած էր սարսափերով:

Ոչ պակաս հարուստ էր Կոնորը: Եկեղեցուն պատկանում էր Ֆրանսիայի բոլոր հողերի 1/5-ը և ամենատարգաւանդ մասը: Եկե-

¹ Laviase et Rambaud, Histoire générale.

շեցական բոլոր հողերի արժէքը հաշոււմ էին մօրաւորապէս մէկ միլիարդ: Հսկայական եկամտւորից առիւծի բաժինը հասնում էր բնականաբար եկեղեցու գերագոյն սպասաւորներին: Ֆրանսիայի բոլոր 131 եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները ունէին տարեկան եկամուտ՝ աւելի քան 35 միլիօն ֆրանկ, ուրեմն միջին թւով աւելի քան 250,000 իւրաքանչիւրը: Կարդինալ Ռոհան, Ստրասբուրգի արքեպիսկոպոսը ստանում էր մենակ մօտ 2 $\frac{1}{2}$ միլիօն տարեկան ¹!

Այս մի քանի չոր, բաց ծանրակշիւ ֆաբրերը պաշտօն օրէն վկայում են, թէ որքան հրեշտային էր այն կազմակերպւած թաւանը, որ միացած ուժերով մղում էին աշխարհաւոր ժողովրդի երեք թշնամի տարրերը:

Դասակարգային այդ անարդար շարաբերութիւնների անհրաժեշտ ծնունդն էր Մեծ Յեղափոխութիւնը, որը հէնց իր առաջին գործողութեան մէջ ծանուցեց աշխարհին մարդկանց հաւասարութիւն, ազատութիւն և եղբայրութիւն...

Յայտնի է, որ յոյսերը չարդարացան: Եւ ոչ միայն այն պատճառով, որ յեղափոխական փոթորիկները յանդեցին ի վերջոյ ինքնակալ միապետութեան հաստատմանը՝ յանձին Բոնապարտի: Ոչ: Մենք տեսնք այնուհետեւ Ֆրանսիայում պարլամենտական կարգերի յաղթանակը. սակայն նոյն իսկ հանրապետական ամենաընդարձակ ազատութիւնները չըտուին Ֆրանսիային այն, ինչին նա ձգտում էր 1789-ին, երբ նա պարզեց կարմիր յեղափոխական դրոշը: Հաւասարութիւնն ու եղբայրութիւնը մնացին շարքի խօսքեր: Դասակարգային անիրաւ շարաբերութիւնները շարունակւեցին. շասակարգերը չըվերացան: Ֆէօդալական—կղերական առանձնաշնորհումները չքացան—իրաւ է: Բաց քաղաքական գերիշխանութիւնը անցաւ միայլ շասակարգի—քուրթուազիային, որով և սխալում է շարուս կապիտալիստական շրջանը, խոշոր ինդուստրիայի հետ կապւած կապիտալիստ և բանոր շասակարգերի երեւան գալու: Հետեւանքներով:

¹ Louis Blanc, Histoire de la Révolution française Բալ. Neue Zeit-ի 1889.